ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Էներգետիկ

Աշխատանքի վայրը, տեսակը, աշխատաժամանակը

ք. Երևան, հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Իրականացնել պոմպակայանների էներգետիկ աշխատանքների կազմակերպում;
- Կազմակերպել էներգետիկ սարքավորումների և էներգիայի մատակարարման բարելավման հետ կապված առաջարկների ներդրումը;
- Կազմակերպել և վերահսկել պոմպակայանների էներգետիկ սարքավորումների և էլեկտրական համակարգերի տեխնիկապես ճիշտ աշխատանքն ու ժամանակին վերանորոգումը;
- Կազմակերպել և վերահսկել Էլեկտրական և պոմպային համակարգերի սպասարկման, պահպանման և վերանորոգման աշխատանքները;
- Առաջարկել և իրականացնել էներգիայի սպառման կրճատման, նոր տեխնոլոգիաների ներդրման, էլեկտրակայանների ծախսերի արդյունավետ և անվտանգ շահագործման, ինչպես նաև արդյունավետության բարձրացման միջոցառումները;
- Ներկայացնել էներգետիկ սարքավորումների, նյութերի, պահեստամասերի անհրաժեշտ գնումների ցանկը համապատասխան հաշվարկների ուղեկցությամբ;
- Կազմել եզրակացություններ մշակված նախագծերի վերաբերյալ, մասնակցել էլեկտրակայանների և ցանցերի շահագործման համար փորձարկումներին և ընդունմանը;
- Կազմակերպել էներգետիկ սարքավորումների պահեստավորման և հաշվառման, պոմպակայանների վթարների և դրանց պատճառների հաշվառման աշխատանքները;
- Մասնակցել էլեկտրական սարքավորումների հուսալիության, աշխատանքի որակի բարելավման և արդիականացման միջոցառումների մշակմանը;
- Պահպանել և հետևել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ընթացակարգերով, պոմպակայանների, էլեկտրակայանների շահագործման և էներգետիկ սարքավորումների ու ցանցերի օգտագործման վերաբերյալ հրահանգներին

Պահանջներ

- Էներգիայի մատակարարման կազմակերպման կարողություն;
- Արտադրական հզորությունները, էներգետիկ սարքավորումների և էներգիա օգտագործող կայանքների տեխնիկական բնութագրերի, նախագծման
- առանձնահատկությունների և ռեժիմների, դրանց շահագործման կանոնների իմացություն;
- Էլեկտրական սարքավորումների վերանորոգման, սպասարկման և պահպանման կանոնների իմացություն;
- Սարքավորումների աշխատանքի պլանավորման և վերանորոգման կազմակերպման կարգի ու մեթոդների, տեղադրման, ընդունման և առաքման կանոնների իմացություն;
- Կարգապահության և բարձր պատասխանատվության զգացում;

- Բարձրագույն կրթություն էներգետիկայի ոլորտում;
- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ էներգետիկայի ոլորտում

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները /CV am.water.hr@veolia.com էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Էներգետիկ:** Հարցազրույցի կհրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: